Արտասահմանյան գրականություն

ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ

(1860-1904)

Ռուս գրող Անտոն Պավլովիչ Չեխովը մեծ դրամատուրգ է, մասնագիտությամբ՝ բժիշկ: Նա կարճ պատմվածքների լավագույն վարպետներից է: Չեխովի կարճ պատմվածքներն արժանացել են գրողների և քննադատների բարձր գնահատականին: Գրական գործունեությանը զուգընթաց՝ Չեխովը երկար տարիներ զբաղվել է բժշկությամբ:

1896 թվականին «Ճայը» պիեսի «տապալումից» հետո Չեխովը հրաժարվել է թատրոնից, սակայն 1898 թվականին այն բեմադրվել է Մոսկվայի՝ Կոնստանտին

Ստանիսլավսկու ղեկավարած արվեստի թատրոնում, որտեղ հետագայում բեմադրվել է նաև Չեխովի «Քեռի Վանյան», ներկայացվել են նաև վերջին երկու թատերգությունների՝ «Երեք քույր»-ի և «Բալենու այգին» պիեսի պրեմիերաները:

Գրել է շուրջ 900 ստեղծագործություն՝ բազմաթիվ պատմվածքներ, վիպակներ, պիեսներ: Նրա «Ճայը», «Քեռի Վանյան», «Երեք քույր» և «Բալենու այգին» պիեսները ճանաչվել են համաշխարհային դրամատուրգիայի դասական ստեղծագործություններ: Պատմվածքներից աչքի են ընկնում «Կաշտանկան», «Շնիկով տիկինը» և այլն: Չեխովի բոլոր հիմնական երկերը թարգմանվել են հայերեն:

Չեխովի հայրական տունը, Տագանրոգ, Ռուսաստան

Չեխովի ընտանիքն ու ընկերները, 1890 թ.

Անտոն Չեխովը ծնվել է 1860 թվականի հունվարի 29-ին (հին տոմարով՝ հունվարի 17-ին)՝ Անտոն Մեծի տոնակատարության օրը, Տագանրոգ քաղաքում: Անտոնի հայրը՝ Պավել Եգորովիչ Չեխովը, գյուղացու զավակ էր, որն ամուսնացել էր ուկրաինուհու հետ: Պավել Չեխովը հայտնի էր որպես կրոնական-պահպանողական ավանդներին հավատարիմ քաղքենի առևտրական: Նա իր որդիներին պարտադրում էր հաճախել եկեղեցի և ճշտությամբ կատարել կրոնական բոլոր ծեսերը, ինչպես նաև ստիպում էր նրանց կատարել խանութի գործակատարի պարտականությունները: Մանկության այդ ծանր տարիներից էլ սկսվում է Անտոնի այնքան յուրահատուկ և բացահայտ ատելությունը քարացած ավանդույթների, կրոնի և Եկեղեցու նկատմամբ: Չեխովի մայրը՝ Եվգենյան (Մորոզովա), հոյակապ հեքիաթասաց էր, որը վաճառական հոր հետ շրջելով ողջ Ռուսաստանով, երեխաներին հեքիաթներ էր պատմում: «Մենք տաղանդը ժառանգել ենք հորից, հիշում է Չեխովը,- իսկ մեր հոգին՝ մորից»:

1876 թվականին Չեխովի հայրը սնանկացավ: Պարտատիրոջից, բանտից խուսափելու համար նա փախավ Մոսկվա, որտեղ իր երկու ավագ որդիները՝

Ալեքսանդրն ու Նիկոլայը, սկսեցին հաճախել համալսարան: Ընտանիքը ապրում էր Մոսկվայում՝ աղքատության մեջ: Չեխովը ստիպված էր հոգալ թե՛ իր կյանքի ապահովության մասին և թե՛ միաժամանակ շարունակել ուսումը Տագանրոգի գիմնազիայում, որտեղ պարտադիր կարգով դասավանդում էին հին հունարեն և հին լատիներեն: Այնտեղ նա սովորում է տասնմեկ տարի, մեկ տարի ավելի, քանի որ 15 տարեկանում չէր հանձնել հին հունարենի քննությունը: Տագանրոգում, հոր ընտրությամբ, Չեխովը երգում էր Հունական ուղղափառ եկեղեցում:

Չեխովը մնաց Տագանրոգում ևս երեք տարի՝ ապրելով Սելիվանով անունով մի մարդու հետ, որը նման էր «Բալենու այգին» պիեսի Լոպախինին: Չեխովը ստիպված էր վճարել իր սեփական կրթության համար. նա վաստակում էր մասնավոր դասեր տալով: Տնտեսած յուրաքանչյուր ռուբլին ուղարկում էր ընտանիքին՝ հումորային նամակի ուղեկցությամբ, նրանց ոգևորելու ակնկալիքով: Այս ընթացքում նա կարդում և վերլուծում էր Միգել Սերվանտեսի, Իվան Տուրգենևի, Իվան Գոնչարովի և Արթուր Շոպենհաուերի աշխատանքները և գրեց լիարժեք կոմիկական դրամա՝ «Անհայրը», որը նրա եղբայր Ալեքսանդրը որակեց որպես «աններելի, թեև անմեղ, կեղծիք»: Գիմնազիայում սովորելու տարիներին Անտոնն աչքի էր ընկնում արտասովոր ընթերցասիրությամբ: Պատանեկության տարիներին Չեխովի սիրելի հեղինակներից մեկն է եղել Վիկտոր Հյուգոն: Շատ բարձր գնահատելով Շեքսպիրի արվեստը՝ 1876 թվականին եղբորը գրած նամակում խորհուրդ է տալիս նրան կարդալ Տուրգենևի հայտնի հոդված-ակնարկը Շեքսպիրի և Սերվանտեսի մասին: Տագանրոգի թատրոնը շատ խղճուկ վիճակում էր, սակայն Չեխովը, բեմադրելով Գրիբոեդովի «Խելքից պատուհասը» կամ Լերմոնտովի «Դիմակահանդեսը», Գոգոլի «Ամուսնությունը», «Ռևիզորը» և Օստրովսկու գործերը, աշակերտներին կապում էր արվեստի և գրականության առաջավոր ներկայացուցիչների հետ: Չեխովը հաճախ ինքն էլ էր մասնակցում աշակերտական բեմադրություններին և նույնիսկ գրում պիեսներ:

Չեխովն ուներ մի շարք սիրային արկածներ, այդ թվում նաև՝ ուսուցչի կնոջ հետ:

Գիմնազիան ավարտելուց հետո Չեխովը ուղևորվում է Մոսկվա՝ պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում ուսանելու: Քանի որ նրանց ընտանիքը դեռ ծանր կացության մեջ էր, Անտոնը կրկին ստիպված էր և՛ սովորել, և՛ աշխատանք փնտրել: Հետևելով ավագ եղբոր խորհրդին՝ նա որոշում է աշխատակցել ռուսական երգիծական պարբերականներին և կարողանում է կարճ ժամանակում բավական սերտ կապեր ստեղծել դրանց խմբագիրների

հետ: Սկզբում գրում էր թռուցիկ ակնարկներ կամ թեթև երգիծական պատմվածքներ: Ուսանողական տարիներին ավելի հաճախ հանդես է եկել Անտոշա Չեխոնտե կեղծանունով: Սկզբնական շրջանում գրում էր շատ հապճեպ՝ ջանալով շուտ հանձնել անհրաժեշտ նյութերը և արագ ստանալ վարձատրությունը: Հաճախ նկարագրում էր աննշան և առօրյա դեպքեր, կյանքի զավեշտալի կողմերը: Գրական լարված աշխատանքը անհետևանք չի մնում. Չեխովը հետզհետե մշակում է կյանքի երևույթները դիտելու, ուսումնասիրելու և արձանագրելու արտասովոր ընդունակություն: Նա յուրացնում է հակիրճ գրելու դժվարին արվեստը: Այս նոր ժամանակահատվածում նա սկսում է կյանքին և իրականությանը մոտենալ նոր դիրքից:

Չեխովը սկսում է ավելի մեծ ուշադրությամբ դիտել շրջապատող ծանր իրականությունը և ավելի լավ տեսնել իրական կյանքի հակասական երանգներն ու բարդ ելևէջները: Նա դարձյալ գրի էր առնում զավեշտալի դեպքեր, դարձյալ աշխատում էր կատակներով գրավել իր ընթերցողների ուշադրությունը: Սակայն այժմ արդեն չէր կարողանում սառնասիրտ մնալ և թաքցնել իր հույզերն ու խեղդել հոգու խորքում պահած ապրումներն ու մտորումները: Որպես բժիշկ և գիտնական-գրող՝ Չեխովը միշտ մանրակրկտորեն էր մոտենում իր պատմվածքների թեմաների մշակմանը, առանձին սյուժեների ընտրությանը և միշտ ձգտում էր արտացոլել իրականությունը: Այդ էր պատճառը, որ նա անվերջ գրում էր, մշակում, վերամշակում՝ ավելի դիպուկ բառեր գտնելու և ավելի ազդու գույներ ընտրելու համար: Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո Չեխովը անցնում է ինտենսիվ ստեղծագործական աշխատանքի: Երբ լույս է տեսնում Չեխովի ակնարկների և պատմվածքների առաջին ժողովածուն, ռուս մի քանի քննադատներ, գրականագետներ, ողջունելով նոր հեղինակին, միաժամանակ հայտնում են իրենց տարակուսանքները: Չեխովն առավոտից մինչև երեկո լինում էր հիվանդանոցում և լարված աշխատանք էր տանում: Համբերությամբ լսում էր բազմաթիվ հիվանդների գանգատները, ուսումնասիրում նրանց կենցաղային պայմանները, սփոփանքի ջերմ խոսքեր գտնում յուրաքանչյուր հիվանդի համար:

Որպես բժիշկ՝ Չեխովի աշխատանքը հարստացրեց նրա գրելու թեմաները, նա հնարավորություն ունեցավ մոտիկից շփվելու ռուս հասարակության բոլոր շերտերի հետ, օրինակ՝ նա առաջին անգամ ականատես եղավ գյուղացիների անառողջ և ցածր կենսապայմաններին, որը նկարագրեց իր «Գյուղացիները» կարճ պատմվածքում: Չեխովն այցելել է նաև հարուստ խավին, որոնց մասին հիշատակել է իր նոթատետրում. «Արիստոկրատնե՞ր. նույն տգեղ մարմիններն ու ֆիզիկական անազնվությունը, նույն անատամ տարիքը և զզվելի մահը, ինչպես

շուկայական կանանց հետ է լինում»:

1894 թվականին Մելիխովոյի այգում կառուցված տնակում Չեխովը սկսեց գրել իր «Ճայը» պիեսը: Մելիխովո տեղափոխվելուց երկու տարի հետո Չեխովը վերանորոգեց տունը, զբաղվեց գյուղատնտեսությամբ և այգեգործությամբ, մշակեց այգին ու լճակը, տնկեց շատ ծառեր, որոնք, ըստ Միխայիլի, «խնամում էր ... ինչպես իր զավակներին: Ինչպես «Երեք քույրեր» պիեսում գնդապետ Վերշինինը, երբ նայում էր նրանց, մտածում էր, թե ինչ կլինեն երեք-չորս հարյուր տարի հետո»:

1896 թվականի հոկտեմբերի 17-ին Սանկտ Պետերբուրգի Ալեքսանդրինսկի թատրոնում «Ճայը» պիեսի առաջին բեմադրությունը կատարյալ ֆիասկո էր, քանի որ չընդունվեց հանդիսատեսի կողմից: Սակայն թատրոնի ռեժիսոր Վլադիմիր Նեմիրովիչ-Դանչենկոն այնքան տպավորված էր պիեսով, որ համոզեց իր կոլեգա Կոնստանտին Ստանիսլավսկուն 1898 թվականին բեմադրել այն Մոսկվայի գեղարվեստական ակադեմիական թատրոնում: Ստանիսլավսկու ուշադրությունը հոգեբանական ռեալիզմի և խաղացող անսամբլի վրա՝ վերականգնեց Չեխովի հետաքրքրությունը դեպի դրամատուրգիան: Գեղարվեստական թատրոնը Չեխովին պատվիրեց էլ ավելի շատ պիեսներ, և հաջորդ տարի բեմադրեց Չեխովի «Քեռի Վանյան» և «Փայտե հրեշը» պիեսները, որոնք Չեխովն ավարտել էր 1896 թվականին:

1897 թվականի մարտին Մոսկվա կատարած այցի ժամանակ Չեխովը հիվանդանում է թոքերի արյունահոսությամբ: Մեծ դժվարությամբ նրան համոզում են հիվանդանոց տեղափոխվել, որտեղ բժիշկները թոքերի վերին մասում ախտորոշում են տուբերկուլոզ և պատվիրում փոխել կենսակերպը:

1898 թվականին՝ հոր մահից հետո, Չեխովը Յալթայի ծայրամասում գնել էր հողատարածք և կառուցել «Սպիտակ» ամառանոցը, որտեղ տեղափոխվել էր մոր և քրոջ հետ: Չնայած նա տնկել էր ծառեր ու ծաղիկներ, պահում էր շներ և կռունկներ, ընդունում հյուրերի, ինչպիսիք էին Լև Տոլստոյը և Մաքսիմ Գորկին, Չեխովը միշտ շտապում էր «տաք Սիբիրից» դեպի Մոսկվա կամ արտերկիր: Նա խոստացել էր տեղափոխվել Տագանրոգ, երբ այնտեղ ջրամատակարարում տեղադրվեր: Յալթայում թատրոնի համար Չեխովն ավարտեց ևս երկու պիես («Երեք քույր», «Բալենու այգին»)՝ ստեղծագործելով ավելի դժվար, քան երբ գրում էր պարզ, ինչպես այժմ բլիթներն էր ուտում:

1901 թվականի մայիսի 25-ին Չեխովն ամուսնացավ Օլգա Կնիպպերիի հետ: Նա Նեմիրովիչ-Դանչենկոյի հովանավորյալն ու նախկին սիրուհին էր, որին Չեխովն առաջին անգամ հանդիպել էր «Ճայը» պիեսի փորձերի ժամանակ:

Մինչ այդ՝ Չեխովը, որ հայտնի էր որպես «Ռուսաստանի՝ ամուսնությունից խուսափող գրական ամուրի», նախընտրում էր անցողիկ կապեր: Նամակը կարծես Չեխովի ամուսնական պայմանավորվածությունների մարգարեությունը լիներ Օլգայի հետ. նա ապրում էր հիմնականում Յալթայում, Օլգան՝ Մոսկվայում՝ զբաղվելով իր դերասանական կարիերայով: 1902 թվականին Օլգան վիժում է. Դոնալդ Ռեյֆիլդը, հիմք ընդունելով զույգերի նամակները, եզրակացնում է, որ դրա պատճառը կարող էր Չեխովի ու Օլգայի բաժանումը լինել, չնայած ռուս գիտնականները հերքել են այդ պնդումը: Այս հեռավար ամուսնության գրական ժառանգությունը նամակագրությունն է, որը թատրոնի պատմության գանձեր է պահպանում՝ ներառյալ Ստանիսլավսկու ռեժիսորական մեթոդների վերաբերյալ ընդհանուր բողոքները և Չեխովի խորհուրդները Օլգային՝ իր պիեսներում խաղալիս:

Յալթայում Չեխովը գրել է իր ամենահայտնի պատմվածքներից մեկը՝ «Շնիկով տիկինը», որը ներկայացնում է ամուսնացած ցինիկ տղամարդու և ամուսնացած դժբախտ կնոջ միջև առաջին հայացքից պատահական թվացող կապը, որոնք հանդիպում են Յալթայում հանգստանալիս: Նրանք չեն ակնկալում տևական որևէ բան: Անսպասելիորեն, աստիճանաբար սիրահարվելով, հայտնվում են ընտանիքի անվտանգության ռիսկային սկանդալում: Պատմվածքում յուրօրինակ կերպով ներկայացվում են նրանց զգացմունքները միմյանց հանդեպ, խորը սիրո արդյունքում հիասթափված գլխավոր հերոսի ներքին վերափոխումը և նրանց անելանելիությունը՝ հեռանալ ընտանիքից, թե՞ միմյանցից:

Սախալինյան ուղևորությունից Մոսկվա վերադառնալուց հետո՝ 1890 թվականից մինչև 1895 թվականը, Չեխովը բնակություն է հաստատում Մալայա Դիմիտրովկայում գտնվող երկհարկանի մի բակաշենքում: Այստեղ նա աշխատում էր «Սախալին կղզին» գրքի, «Թեթևսոլիկը», «Մենամարտ», «Հիվանդասենյակ № 6» պատմվածքների վրա, ինչպես նաև հանդիպում էր գրողներ Վլադիմիր Կորոլենկոյի, Դմիտրի Գրիգորևիչի, Վլադիմիր Գիլյարովսկու, Պյոտր Բոբորիկինի, Դմիտրի Մերեժկովսկու, Վլադիմիր Նեմիրովիչ-Դանչենկոյի, նշանավոր դերասաններ Ալեքսանդր Լենսկու և Ալեքսանդր Յուժինի, նկարիչ Իսահակ Լևիտանի հետ: Բակաշենքը պահպանվել է մինչև մեր ժամանակները, նրա վրա տեղադրված է հուշատախտակ գրողի խորաքանդակով:

1892 թվականից մինչև 1899 թվականը Չեխովը բնակվել է մերձմոսկովյան Մելիխովո կալվածքում, որտեղ ներկայումս գործում է չեխովյան գլխավոր թանգարաններից մեկը: «Մելիխովյան նստավայրի» տարիներին գրվել են

քառասունից ավելի ստեղծագործություններ: Հետագայում շատ է ճամփորդել Եվրոպայում: 1899 թվականին գրահրատարակիչ Ադոլֆ Մարքսին է վաճառել իր հեղինակային իրավունքը այն երկերի համար, որ արդեն գրվել էին և պետք է գրվեին հետագա քսան տարիներին: 1898 թվականի վերջին գրողը Յալթայում հողակտոր գնեց, որտեղ ճարտարապետ Լ. Ն. Շապովալովի նախագծով տուն կառուցեց և հիմնեց այգի: Վերջին տարիներին Չեխովը, որի մոտ տուբերկուլոզի սրացումներ էին սկսվել, առողջությունը կարգի բերելու նպատակով մշտապես բնակվում էր Յալթայի իր բնակարանում, միայն հազվադեպ էր լինում Մոսկվայում, որտեղ ապրում էր (1901 թվականից) նրա կինը՝ արտիստուհի Օլգա Լեոնարդովնա Կնիպպերը, որը կարևոր տեղ էր զբաղեցնում 1898 թվականին հիմնված Մոսկվայի գեղարվեստական թատրոնում:

1900 թվականին գիտությունների ակադեմիայի ռուսաց լեզվի և գրականության բաժանմունքի գեղարվեստական գրականության բնագավառում առաջին իսկ ընտրության ժամանակ Չեխովն ընտրվեց պատվավոր ակադեմիկոս: 1902 թվականին, այն բանից հետո, երբ կայսր Նիկոլայ 2-րդի հրամանով չեղյալ համարվեց Մաքսիմ Գորկու պատվավոր ակադեմիկոս ընտրվելը, Չեխովը, ի նշան բողոքի, Վ. Գ. Կորոլենկոյի հետ միասին հրաժարվեց այդ պատվավոր, բարձր կոչումից:

Չեխովը Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետ է ընդունվել 1879 թվականին և այն ավարտել է 1884 թվականին: Եղել է բարեխիղճ ուսանող, հաճախել է պրոֆեսորներ Ալեքսանդր Բաբուխինի, Գրիգորի Զախարինի, Կլեյնի, Ալեքսանդր Ֆոխտի, Վլադիմիր Սնեգիրյովի, Ալեքսեյ Օստրոումովի, Ալեքսեյ Կոժևնիկովի, Ֆեոդոր Էրիսմանի, Սկլիֆոսոֆսկու դասախոսություններին: Արդեն 1881 թվականից սկսում է բժշկի պրակտիկան դոկտոր Պ. Ա. Արխանգելսկու մոտ Մոսկվայի նահանգի Զվենիգորոդի գավառի Չիկինսկի տեղական բուժարանում: Իր իսկ վկայությամբ՝ չի զղջացել, որ գնացել է բժշկական ֆակուլտետ:

Ավարտելով համալսարանը՝ Չեխովը փորձեց զբաղեցնել մանկական կլինիկաներից մեկի մանկաբույժի թափուր աշխատատեղը, սակայն անհայտ պատճառով այդ նշանակումը չկայացավ: Բժշկի դիպլոմ ստանալուց հետո Չեխովն իր բնակարանի դռան վրա տեղադրեց «Բժիշկ Ա. Պ. Չեխով» ցուցատախտակը, շարունակում էր բուժել իր մոտ հաճախողներին և այցելում ծանր հիվանդներին:

Սակայն Չեխովը հրաժարվում է զվենիգորոդյան հիվանդանոցում մշտական տեղ զբաղեցնելու առաջարկից՝ փոխարինելով արձակուրդում գտնվող տեղական հիվանդանոցի վարիչին, կատարելով տեղական բժշկի առօրեական աշ-

խատանքներ, դատաբժշկական փորձաքննություններ, ցուցմունքներ տվել դատարանում որպես դատաբժշկական փորձագետ և այլն: Գալիս է մի ժամանակ, երբ Չեխովը սկսում է տատանվել վերջնական մասնագիտության ընտրության հարցում: Բժշկությունը միաժամանակ դառնում է գրականության խոչընդոտ, և անսպառ աղբյուր չեխովյան սյուժեների համար:

Այդ ժամանակ նա նախապատրաստվում էր նաև բժշկության դոկտորի աստիճանի քննություններին, որի համար նյութեր էր հավաքում բժշկական գործի պատմության վերաբերյալ, սակայն մտադրությունն ավարտին չհասցնելով՝ արդեն 1887 թվականին հանել է բժշկի ցուցանակը: Բուժող բժշկի անխուսափելի ձախողումները մի կողմից և «Մթնշաղներում» ժողովածուի համար Գիտությունների ակադեմիայի Պուշկինյան մրցանակը կանխորոշեցին նրա վերջնական ընտրությունը: Այնուհետ բժշկական պրակտիկան մղվում է երկրորդ պլան, չնայած մասնավոր բժշկական գործունեությամբ զբաղվելը շարունակում է մինչև 1897 թվականին Յալթա մեկնելը:

Հոգու խորքում Չեխովի մեջ բժիշկը երբեք չի մեռնում: Սախալին մեկնելու դրդապատճառներից մեկը բժշկությանը «գոնե մի քիչ վարձահատույց» լինելու ցանկությունն էր: Բանտերի, բժշկական հիվանդանոցների, բարաքների, տեղական մանկաբարձական ծառայության սանիտարական վիճակի ուսումնասիրությունը ցնցեց Չեխովին: «Սախալին կղզի» գրքում իր սեփական աշխատանքների արդյունքները թույլ տվեցին նրան ասելու. «Բժշկությունը չի կարող ինձ դատապարտել դավաճանության համար: Ես պատշաճորեն եմ հատուցել գիտնականությանը»:

Բժշկությանը «դավաճանելու» շարժառիթը Չեխովի կողմից բազմիցս շրջանառվում է այդ տարիներին: Մեկ նա կախաղան է բարձրանում նրա առաջ՝ իրեն անվանելով «խոզ», մեկ էլ խաղարկում է հետևյալ հակավարկածը. «Բժշկությունը իմ օրինական կինն է, իսկ գրականությունը՝ իմ սիրուհին: Երբ մեկը ձանձրացնում է, գիշերում եմ մյուսի մոտ»: Սակայն բժշկական միջավայրը երբեք չի հանդիմանել Չեխովին բժշկությունից դեպի գրող հեռանալու համար: 1902 թվականին Մոսկվայում կայացած բժիշկների Պիրոգովյան համագումարի անդամները միաձայն շնորհակալություն հայտնեցին գրողին նրա գրական գործունեության համար, ռուսական գրականության մեջ բժշկական գործիչների իրական կերպարների ստեղծման համար:

1890-ական թվականների կեսերին Չեխովը դեռևս մտածում էր համալսարանում սեփական մասնավոր ախտաբանական և բուժման դասընթացների մասին: Դասախոսելու համար նրան անհրաժեշտ էր գիտական աստիճան

և դիսերտացիայի պաշտպանություն: Անտոն Պավլովիչը որպես այդպիսին առաջարկում է օգտագործել «Սախալին կղզին», սակայն ֆակուլտետի դեկանը չի համաձայնում ինչպես պաշտպանության, այնպես էլ դասընթացներում դասախոսություններ կարդալու համար:

Չեխովը կամավոր մասնակցում է սովի և խոլերայի համաճարակի հետևանքների դեմ պայքարին 1891-1892 թվականներին, բայց պրակտիկ բժշկությունն աստիճանաբար նույնիսկ սահմանափակ չափերով սկսում է ձգել գրողին:

Լայն ճանաչում էր ստացել նրա խոստովանությունը Ա. Ս. Սուվորինին. «Օ՜հ, ինչքան են ինձ ձանձրացրել հիվանդները. հարևան կալվածատերը ներվային հարված էր ստացել, և ինձ քարշ էին տալիս նրա մոտ մի քնձռոտ սայլակառքով: Բոլորից շատ ձանձրացնում էին ծծկեր երեխաներով կանայք և դեղափոշիները, որոնք կշռելը ձանձրալի էր» (նամակ՝ գրված 1891 թվականի օգոստոսի 28-ին): Իսկ մինչ այդ. «Նողկալի ժամեր և օրեր, որոնց մասին ես պատմում եմ, լինում են միայն բժիշկների մոտ» (նամակ՝ գրված նույն թվականի օգոստոսի 18-ին): Նրա տրամադրությունը չի փոխվում նաև հաջորդ տարի, նա գրում է. «Իմ հոգին հոգնած է: Տխուր է: Չպատկանել ինքդ քեզ, մտածել միայն փորլուծության մասին, ցնցվել գիշերը շան հաչոցից կամ դռան թակոցից (արդյոք իմ հետևից չե՞ն եկել), ճամփորդել նողկալի ձիերով, անհայտ ճանապարհներով և կարդալ միայն խոլերայի մասին ու սպասել միայն խոլերայի և միևնույն ժամանակ լինել լիովին անտարբեր այդ հիվանդության և այն մարդկանց նկատմամբ, ում դու ծառայում ես, դա այնպիսի շիլափլավ է, որից դու կարող ես վատ զգալ» (նամակ գրված 1892 թվականի օգոստոսի 16-ին): «Բժիշկ լինելը լավ չէ. և՛ սարսափելի է, և՛ ձանձրալի, և՛ զզվելի: «Չեխովյան տխրության» ևս մեկ օրինակ. «Ես միայնակ եմ, քանի որ ամբողջ խոլերայինը օտար է իմ հոգուն, իսկ աշխատանքը, որը պահանջում է մշտական շրջագայություններ, բամբասանքներ և մանր հոգսեր, ինձ համար հոգնեցուցիչ է: Գրելու ժամանակ չկա: Գրականությունը վաղուց լքված է, ես մուրացիկ եմ և աղքատ, քանի որ նպատակահարմար գտա իմ և իմ անկախության համար հրաժարվել տեղամասային բժշկի վարձատրությունից» (նամակ՝ գրված 1892 թվականի օգոստոսի 1-ին): «Ինձ արդեն շատ են ձանձրացնում խոսակցությունները և հիվանդները, հատկապես կանայք, որոնք բուժման ընթացքում անսովոր հիմար են ու համառ» (Իվան Գորբունով-Պոսադովին, մայիսի 20, 1893 թ.):

Բայց անգամ գրական ճանաչման և բժշկական գործունեությունից հրաժարվելու տարիներին Չեխովը զգացել է իր կապը բժշկական աշխարհի հետ, նրան հետաքրքրել են այս բնագավառի գիտության նվաճումները, նա հոգ

էր տանում «Վիրահատական տարեգիր» և «Վիրահատություն» բժշկական ամսագրերի համար, որոնք այդ տարիներին տառապում էին միջոցների բացակայությունից, երկար տարիներ եղել է «Բժիշկ» թերթի ընթերցողը և հրապարակվել դրանում: 1895 թվականին նա մասնակցել է մոսկովյան տեղական բժիշկների համագումարին, որոնք կայանում էին Պոկրովսկ գյուղի տեղական հոգեբուժական հիվանդանոցում: Իրականում Չեխով-բժիշկը և Չեխով-գրողը իրար հետ հակասության մեջ չեն, ուղղակի գրողի «բժշկական» մտածողության ներսում տեղի է ունենում շեշտադրության տեղաշարժ մասնավորից ընդհանուրին: «Ով չի կարողանում մտածել բժշկորեն, այլ մտածում է մասնակիորեն, նա ժխտում է բժշկությունը: Բոտկինը, Զախարինը, Վիխրովը և Պիրոգովը, անշուշտ, խելացի և շնորհալի մարդիկ են, հավատում են բժշկությանը, ինչպես Աստծուն, քանի որ նրանք մեծացել են մինչև «բժշկություն» հասկացությունը» (Սուվորինին, 18 հոկտեմբերի, 1888 թ.): Կիրառելով այս ամենը Չեխովի հանդեպ, սա նշանակում է ձգտել մասնակի ախտանիշների միջոցով պարզելու առանձին անհատի անհաջողությունների էական պատճառները, որոնք պայմաններ են ստեղծում համաճարակի առաջացման, վաղաժամ ծերացման և սոցիալական անհամաչափության համար: Չեխովը սկսում է ձգտել հոգեբուժության: Այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են «Հիվանդասենյակ № 6», «Նոպա» և «Սև վանականը» կարող է գրել ոչ միայն ցանկացած գրող-բժիշկ, այլև հենց «բժշկական մտածողությամբ» գրողը, հանձին Չեխովի: Ի. Ի. Յասինսկին «Իմ կյանքի վեպը» ստեղծագործությունում վկայում է, որ Չեխովին «չափազանց հետաքրքրում է այսպես կոչված հոգեկան ցանկացած շեղում»: Նրա կարծիքով՝ նա կարող էր դառնալ հոգեբույժ, եթե գրող չդառնար:

Չեխովի «բժշկական» երևակայության շնորհիվ գրականությունը պարտական է այնտեղ բժիշկների անկրկնելի կերպարների, բուժակների, նյարդաբանների և չեխովյան «մռայլ մարդկանց» պատկերասրահի ստեղծմանը (հաճախ կոպիտ, անհարգալից, անտարբեր, բայց և զգայուն, խոցելի): Նրա պատմվածքները նեղ առումով «բժշկի գրառումներ» չեն, դա անկատար հասարակության ախտորոշումն է: Որպես փորձառու բժիշկ՝ Չեխովն առատ նյութ է ստացել տարբեր սոցիալական խմբերի կյանքի ներքին դիտարկման գեղարվեստական ընդհանրացումների համար: Որպես ուշադիր և խելացի նկարիչ՝ նրան մնում էր միայն կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Տարօրինակությունն այն է, որ մեծ մասամբ նա բժիշկներին պատկերել է ուրույն ինքնահեգնական, ծաղրանկարային ոճով: Չեխովը համառորեն պնդում էր բժշկական մասնագիտության մարդասիրական բնույթի մասին՝ կոչ անելով

բժիշկներին ուշադիր և հանդուրժողական վերաբերմունք դրսևորել հիվանդների նկատմամբ: Մեծ մասամբ Չեխովի շնորհիվ ռուսական և համաշխարհային գրականության մեջ ստեղծվեց մտավորական-բժշկի, մարդասեր-բժշկի և անձնվեր մարդու գրական արխետիպը:

Պարգևատրվել է «Բնակչության առաջին համընդհանուր մարդահամարի աշխատանքների համար» մեդալով:

1904 թվականի մայիսին Չեխովը տուբերկուլոզով հիվանդ էր: Հունիսի 3-ին նա Օլգայի հետ ուղևորվեց Գերմանիայի Շվարցվալդ (Սև անտառ) լեռնազանգվածում գտնվող Բադենվայլեր քաղաք, որտեղից քրոջը՝ Մաշային, ուրախ նամակ գրեց՝ նկարագրելով այնտեղի սնունդն ու շրջակայքը և հավաստիացնելով նրան ու մորը, որ ապաքինվում է: Իր վերջին նամակում նա դժգոհում էր գերմանացի կանանց հագնվելու ձևից:

Չեխովի մահը (1904 թ. հուլիսի 2-ին (15) Բադենվայլերում) դարձել է «գրական պատմության մեծագույն բեմադրություններից», այն բազմաթիվ անգամներ վերապատմել են, նկարազարդել, նկարահանել. առավել ուշագրավ է Ռայմոնդ Կայվերի «Հանձնարարություն» կարճ պատմվածքը: Չեխովի մարմինը Մոսկվա տեղափոխվեց ոստրեների համար նախատեսված՝ սառեցված երկաթուղային մեքենայով, ինչը վիրավորեց Գորկուն: 1904 թվականի հուլիսի 9-ին (22) տեղի ունեցավ Չեխովի հուղարկավորությունը, հոգեհանգստյան կարգը կատարվեց Նովոդևիչի վանքի Վերափոխման եկեղեցում: Չեխովին հողին հանձնեցին Վերափոխման եկեղեցու անմիջապես հետնամասում գտնվող գերեզմանոցում՝ հոր շիրիմի կողքին: Գերեզմանի վրա տեղադրվել էր փայտե խաչ՝ կանթեղի պատկերով: Չեխովի մահվան տարելիցի օրը՝ 1908 թվականի հուլիսի 2-ին (15), գերեզմանի վրա տեղադրվեց նոր մարմարե հուշարձան՝ պատրաստված նկարիչ Լեոնիդ Բրաիլովսկու կողմից:

1933 թվականին Նովոդևիչի վանքի տարածքում գերեզմանոցը վերացվեց, և Օլգա Լեոնարդովնա Կնիպպերի խնդրանքով Չեխովը վերաթաղվեց վանքի հարավային պատի հետևում գտնվող գերեզմանոցում: 1933 թվականի նոյեմբերի 16-ին գրողի մի քանի հարազատների և մտերիմների ներկայությամբ բացվեց նրա գերեզմանը, և դագաղը տեղափոխվեց նոր վայր: Շուտով այստեղ տեղափոխվեցին երկու տապանաքարերը՝ Անտոն Չեխովի և նրա հոր (վերաթաղման ժամանակ Պ. Չեխովի աճյունը մնացել է հին տեղում):

1891 թվականից սկսած Չեխովը, տարված ստեղծագործական ինտենսիվ աշխատանքով, հրատարակել է պատմվածքներ և պիեսներ, որոնք, ռեալիստորեն բնութագրելով ռուս իրականությունը, իրենց հիմնական ուղղությամբ կոչ էին

անում ընթերցողներին կռվի ելնել գոյություն ունեցող հասարակական չարիքների դեմ, որոնել հասարակական զարգացման նոր ուղիներ, ծառանալ բռնության, բռնակալների, անիրավության դեմ: Սախալինյան ճամփորդությունից հետո Չեխովը հրատարակել է «Գողը» և «Գուսևը»՝ 1890 թ., «Մենամարտ»՝ 1981 թ., «Կանայք», «Կինը», «Աքսորավայրում», «Հարևանները»՝ 1892 թ., «Պալատ № 6»՝ 1892 թ. նոյեմբեր, «Անհայտ մարդու պատմածը»՝ 1893 թ., «Սև վանականը»՝ 1894 թ. (գրվել է 1893 թ.), «Ռոտշիլդի ջութակը»՝ 1894 թ., «Մուժիկներ»՝ 1897 թ. և չինովնիկության մասին («Պատյանով մարդը»՝ 1898 թ. և այլն) պատմվածքները, իր հայտնի դրամատուրգիական գործերը: Չինովնիկության բնութագրմանը նվիրված իր գործերում Չեխովն ավելի խտացված գույներով է նկարագրում իր մռայլ «հերոսներին» և նկարներն էլ դարձնում է հին աշխարհի դեմ ուղղված սուր և անողոք «պատկերներ»՝ դիտավորությամբ դեն նետելով թե՛ հումորիստական երանգները, թե՛ անցյալի «պատգամին» հատուկ կես-հեգնական, կես-էլեգիական տոնը:

Չեխովը մեծ նշանակություն է տվել իր գրվածքների գեղարվեստական մշակմանը: Նրա ստեղծագործություններում նկարագրվել են նաև ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչներ: Չեխովի պատմվածքների և հատկապես պիեսների մեջ աչքի է ընկնում մեծ ուշադրությամբ ընտրված պատկերների նվագային կոլորիտը: Չեխովի գործերի մեջ քնարական տրամադրությամբ տոգորված և գեղարվեստական մեծ ավյունով նկարված դաշտանկարների, լուռ կամ խոսուն բնության, ուռենիներով շրջագծված այգիների նրբին կոլորիտը շաղկապված է հոգնաբեկ ու տխուր, մտախոհ կամ երազող հերոսների մեղմ մորմոքի, գանգատի, զուսպ բողոքի հետ:

Դրամատիկ ստեղծագործություններ Չեխովը սկսել է գրել XIX դարի 70-ականներին: Վարժարանում սովորելու տարիներին Չեխովը մեծ մասամբ գրել է պիեսներ, որոնք մինչ այսօր չեն պահպանվել: Երկրորդ կուրսում գրել է դրամա, որը հետագայում վերնագրվեց «Պլատոնով»: 1885 թվականին գրել է «Մեծ ճանապարհին» էտյուդը, որը գրաքննիչները չեն թույլատրել բեմադրելու: Նրա պիեսներից են «Կարապի երգը» (Կալխաս), «Իվանով», «Արջը», «Առաջարկ», որոնք տպագրվել են 1887 թվականից:

1886 թվականին գրել է մենախոսություն «Ծխախոտի վնասակարության մասին»: Այն տպագրվել է «Պետերբուրգյան թերթ»-ում, «Երփներանգ պատմություններ» ժողովածուում:

1883–1887 թվականներին Չեխովը գրում է դրամատիկ գործեր, հումորային պատմություններ և ծաղրերգություններ: